ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՆԱԽԱՐԱՐ

ՀՐԱՄԱՆ

ք.Երևան «16» մարտի 2026թ. №1078-Լ

«ԲՈՒՍԱԲՈՒԾՈՒԹՅԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ 2026 ԹՎԱԿԱՆԻ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ, ՇԱՀԱՌՈՒՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՁԵՎԱՉԱՓԻ ՕՐԻՆԱԿԵԼԻ ՁԵՎԸ ԵՎ ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2026 թվականի մարտի 26-ի N 384-Լ որոշման հավելվածի 16-րդ, 19-րդ և 20-րդ կետերով և Հայաստանի Հանրապետության վարչապետի 2019 թվականի հունիսի 1-ի N 658-Լ որոշմամբ հաստատված կանոնադրության 18-րդ կետի 21-րդ ենթակետով՝

Հրամայում եմ.

1. Հաստատել՝

1) «Բուսաբուծության աջակցության 2026 թվականի» ծրագրի մասնակցության պայմանագրի օրինակելի ձևը՝ համաձայն N 1 հավելվածի:

2) «Բուսաբուծության աջակցության 2026 թվականի» ծրագրի շահառուների վերաբերյալ տեղեկատվության ձևաչափի օրինակելի ձևը՝ համաձայն N 2 հավելվածի:

3) «Բուսաբուծության աջակցության 2026 թվականի» ծրագրի մոնիթորինգի իրականացման կարգը՝ համաձայն N 3 հավելվածի:

2. Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության լրատվության և հասարակայնության հետ կապերի վարչությանը՝ հրամանը ստորագրվելուց հետո եռօրյա ժամկետում ապահովել սույն հրամանի հրապարակումը Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության պաշտոնական կայքէջում:

Recoverable Signature

X

Signed by: GEVORG PAPOYAN 2102870448

ԳԵՎՈՐԳ ՊԱՊՈՅԱՆ